ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ **« 10 » հուլիսի 2026թ.**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 8

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026թ. հուլիսի 10-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրված արտահերթ նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի ֆեյսբուքյան էջով, քանի որ համայնքապետարանի յութուբյան ալիքի հետ առաջացել է տեխնիկական խնդիր:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասնմեկ անդամները, բացակա էին՝ Վահրամ Պապիկյանը, Անահիտ Սիմոնյանը, Վանո Չատինյանը և Միշիկ Գևորգյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

Ավագանին որոշեց՝ հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 10-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի արտահերթ նիստի՝ հուլիսի 10-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մաարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում փոփոխություններ կատարելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի համայնքային սոցիալական ծրագիրը հաստատելու մասին:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ավագանին որոշեց՝ ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Լոռու մաարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40-Ն

Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Զեկ./Քրիստինե Մելիքջանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով«Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելումասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի թիվ656որոշման 9-րդ կետի պահանջները՝

Ավագանին որոշեց՝ հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի հողային հաշվեկշիռը համաձայն՝ հավելվածի:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Հավելվածը կցվում է:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդհոդվածի 32-րդ և 42-րդ կետերովև 77-րդ հոդվածի 3-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում կատարել փոփոխություններ համաձայն՝ հավելվածի:

Հավելվածը կցվում է:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Շուշանիկ Շահինյան/

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 23 նոյեմբերի 2025 թվականի թիվ 150-Ն որոշումը՝

Ավագանին որոշեց՝ Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի համայնքային սոցիալական ծրագիրը համաձայն՝ հավելվածի:

Հավելվածը կցվում է:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

Նիստի փակում:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի
Խալաթյան Ավետիք Հարությունի
Շահնազարյան Թամարա Էդիկի
Պապյան Հարություն Միշիկի
Չիբուխչյան Արման Հրաչիկի
Ներսեսյան Իրինա Վազգենի
Մարգարյան Սիլվա Ստեփանի
Վերմիշյան Կարլեն Ջիվանի
Գրիգորյան Աննա Հրայրի
Սերոբյան Անի Սամվելի
Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան _____

Նիստը արձանագրեց՝ Անի Մարտիրոսյանը

Կ.Տ.